9289

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 06 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0105-23

Ձեռնարկողը՝ ***«Սիմոնյան կրթական հիմնադրամ» ՀՄԴ***
ք.Երևան, Հալաբյան 16

Գործունեությունը՝ ***Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան փողոց թիվ 16/2 հասցեում նախատեսվող Ինժեներական եվ կիրառական գիտությունների համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0105-23

< 09 > հունիսի 2023թ.

Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան փողոց թիվ 16/2 հասցեում նախատեսվող Ինժեներական և կիրառական գիտությունների համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ՀՄԴ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ «Սիմոնյան կրթական հիմնադրամ» ՀՄԴ-ի կողմից Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան փողոց թիվ 16/2 հասցեում նախատեսվում է կառուցել Ինժեներական և կիրառական գիտությունների համալիր (այսուհետ՝ Համալիր):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7 կետի ա ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը Գ կատեգորիայի գործունեության տեսակ է:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2022թ. օգոստոսի 5-ի N01/18-07/2-50/22514-711 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա (գործողության ժամկետը երեք տարի) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված 1.5 հա մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ 01-001-0007-0225), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատարածքը՝ հասարակական կառուցապատման, իրավունքի տեսակը՝ հողամասի կառուցապատման իրավունք:

Նկարագրական մաս. Հետազոտվող տեղամասը գտնվում է Երևանի արևելյան մասում, Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան փողոց 16/2 հասցեում, Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի արևելյան եզրամասում, ինչն էլ գտնվում է 24մ հեռավորության վրա նախատեսվող շենքից: Հողամասը քարքարոտ է, հողամասի սահմանում կան թվով 7 թեղի տեսակի ծառեր, որոնք, համաձայն Հայտի, պահպանվելու են, ծառահատում կամ տեղափոխում չի նախատեսվում: Գործունեության տարածքում առկա է ապամոնտաժման ենթակա 188մ^2 պահեստային շինություն, հարևանությամբ կառուցապատումից ազատ տարածքներ են, հասարակական և բնակելի շինություններ (34-188 մ):

Կառուցապատման ենթակա տարածքում առկա է գազատար, որի, համաձայն Սիմոնյան կրթական հիմնադրամի և «ՆՍԹ Արքիթեքչուրս Ստուդիո»-ի արձանագրության, շինարարական և տեխնիկական նորմերին ոչ համապատասխան հատվածների տեղափոխումը իրականացվելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և նորմերին համապատասխան:

Համաձայն Հայտով ներկայացված ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների՝ տարածքն ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով խիստ ցամաքային կլիմա: Երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը կազմված է լիցքային և ավազակավային և ճալաքարա-կոպճային գրունտներից, ծակոտկեն, մոխրագույն բազալտներից: Տեղամասի սահմաններում գրունտային ջրերը տեղադրված են 30.0 մետրից խորը, որոնք բեռնաթափվում են Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղադրված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Ուսումնասիրության աշխատանքների ժամանակ գրունտային ջրեր և գործող որևէ ժամանակակից երկրաբանական երևույթներ չեն հանդիպել: Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Մոտակա ջրային ռեսուրսներն են 87մ հեռավորության վրա գտնվող Հրազդան գետը և 6-17մ հեռավորության վրա անցնող ջրատար առուն: Հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված՝ շինարարական աշխատանքները կատարվելու են առանձնացված շինհրապարակի ներսում՝ բացառելով արտահոսքերը և արտանետումները դեպի մակերևութային և/կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներ: Ռելիեֆային անկումով հողամաս է, երկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար:

Նախատեսվող գործունեության տարածքում բնության և (կամ) պատմամշակութային հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաֆունկցիոնալ Համալիր՝ ընդլայնելով Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, նպաստել նորարարության և ձեռներեցության զարգացմանը:

Համաձայն Հայտի տեղեկատվության՝ նախատեսվում է 15.000մ^2 հողամասի սահմաններում կառուցել շուրջ 17.000մ^2 ընդհանուր մակերեսով Համալիր:

Կառույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի մակերես – 15.000մ^2,
- կառուցապատման մակերես – 3.346մ^2,
- բարեկարգման մակերես /ճանապարհներ, սալվածքներ և այլն/ - 3416մ^2,
- կանաչապատման մակերես – 8238մ^2:

Ավտոկայանատեղի չի նախատեսվում, Համալիրի աշխատակիցները և ուսանողները կօգտվեն Թումո կենտրոնի ավտոկայանատեղիից:

Համալիրը բաղկացած է լինելու 1 (մեկ) նկուղային և 6 (վեց) վերգետնյա հարկից: Նկուղային հարկում նախատեսվելու են բեռների ստացման և առաքման, տեխնիկական սենքեր (էլեկտրական վահանակների սենյակ, պոմպակայան ջրավազաններով, օդափոխության սենքեր և այլն), բազմաֆունկցիոնալ և երկակի նշանակության սենքեր՝ պարզագույն թաքստոց, խոհանոց, շենքի էվակուացիոն ելքեր: Շինությունն իրականացվելու է ե/բ սյունահեծանային համակարգով:

Շինությունն ապահովվելու է չորս աստիճանավանդակով և ութ վերելակներով: Արտաքին երեսպատման համար օգտագործվելու է ճակատային համակարգ պոլիկարբոնատից: Տանիքը իրականացվելու է հարթ, ջրահեռացումը կազմակերպվելու է ներքին:

Տարածքով անցնող գրունտային ճանապարհը վերակառուցվելու է՝ ապահովելով նորմերին համապատասխան թեքությունները և չափերը (6մ լայնություն, 11% թեքություն), տեղադրվելու է ասֆալտբետոնե ծածկույթ, ապահովելու է նաև հրշեջ մեքենայի մոտեցումը

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կառույցին՝ հակահրդեհային նորմերի պահանջներին համապատասխան: Կառուցվելու է հետիոտնային ճանապարհ:

Շենքի հաշվարկային տարողությունը կազմում է 2500 մարդ:

Էներգախնայողության նպատակով շենքում իրականացվելու են միջոցառումներ, այդ թվում օդատաքացուցիչների և օդասառեցուցիչների հզորության ավտոմատ կարգավորում, արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելիության փոքր տոկոս ունեցող պատուհաններ, օդատարների ջերմամեկուսացում և այլն:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար Համալիրում ձեռնարկվելու են համապատասխան միջոցառումներ՝ թեքահարթակներ, վերելակներ, սանհանգույցներ:

Շահագործման փուլում համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի տեղեկատվության՝ Համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է նախաձեռնողի հաշվեկշռում գտնվող ԳԵ-7223-ի, ինչը վերակառուցվելու է համապատասխան հզորության: Պահանջվող հզորությունն է 2000 կՎա, սնող ցանցի լարումը՝ 10 կՎ:

Գազամատակարարումն P=0.3 ՄՊա ճնշման և Q = 160 մ³/ ժամ նախատեսվող ծախսով իրականացվելու է ԳԲԿ Երևան-4 սնող Dպ-500 կողմնատար-գազատարից:

Ջրամատակարարումը՝ համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի տեղեկատվության, իրականացվելու է Հալաբյան փողոցով անցնող D=225 մմ ջրագծից, իսկ կոյուղու միացումը՝ տարածքով անցնող D=500 մմ համայնքային կոյուղատարին: Կառույցի համար նախատեսված է կենցաղային կոյուղու ներքին ցանց: Կենցաղային կեղտաջրերը հարկերի սան. սարքերից ինքնահոս կերպով հեռացվելու են դեպի կոյուղու արտաքին ցանց:

Շենքի ջրամատակարարումն իրականացնելու նպատակով նկուղային հարկում տեղադրվելու է 470մ³ տարողությամբ ջրավազան:

Ջերմամատակարարման աղբյուրը սեփական կաթսայատունն է՝ հողամասի հյուսիս-արևելյան հատվածում տեղադրված տեխնիկական մասնաշենքում: Ջեռուցման կայանը բաղկացած է երկու կաթսաներից՝ հագեցած մոդուլացնող երկակի այրիչներով (բնական գազ և հեղուկ վառելիք) և ծխատարի էկոնոմիզատորի հանդերձանքով: Շենքի տանիքում տեղադրվելու են արևային ճնշումային ջրատաքացուցիչներ՝ կոմբինացված տաք ջրի և ջեռուցման համակարգերի հետ:

Շենքի սառնամատակարարման աղբյուր է հանդիսանալու տեխնիկական մասնաշենքում տեղադրված Սառնամատակարարման Հանգույցը: Սառեցված ջրի պոմպային համակարգերը կօգտագործեն փոփոխական արագությամբ առաջնային / երկրորդային համակարգեր՝ ճշգրտված բեռի համար էներգախնայողության կարիքները ապահովելու նպատակով:

Ընդհանուր փոխանակային օդափոխության հրդեհային անվտանգության ապահովման նպատակով իրականացվելու են օդամշակման սարքերի, օդամուղների և ջեռուցիչ սարքերի վիբրացիայի և աղմուկի դեմ միջոցառումներ:

Շենքի հարթ տանիքներից ջրընդունիչ ձագարների և գծային մի շարք հոսակների միջոցով անձրևի և հալոցքի ջրերը ինքնահոս կերպով հեռացվելու են դեպի նկուղային հարկում նախատեսված կուտակման 98մ³ տարողությամբ ջրավազան: Կուտակված ջուրը համապատասխան մշակումից հետո տեղափոխվելու է մաքրված 57.4մ³ տարողությամբ ջրավազան, այնուհետև օգտագործվելու է ոռոգման համար: Չօգտագործված ջուրը հեռացվելու է դեպի բակային ցանց: Պոմպակայանում, կաթսայատան և օդամշակման սարքավորումների սենյակում նախատեսվելու են ջրահեռացնող գծային հոսակներ, փոսորակներ, ընկղմված պոմպեր ջրալցումից խուսափելու համար:

Շենքի նկուղային հարկում 2500 հոգու համար 1505մ² տարածքը արտակարգ իրավիճակների դեպքում ծառայելու է որպես ժամանակավոր թաքստոց՝ ապահոված սանհանգույցներով և օդափոխության համակարգով:

Շին. աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 (երկու) փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը՝ 30 ամիս:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխաածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում: Հիմնական փուլում իրականացվելու է շինարարություն՝ ըստ ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու է երկաթբետոն, փայտ, մետաղ, ապակի, ավազ, ցեմենտ, երեսապատման նյութեր և այլն:

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը, որտեղ պահեստավորվելու և կայանվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը և շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն: Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված սպասարկման կետերում, շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսների վրա:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը մատակարարվելու է բետոնատար ավտոմեքենաներով մասնագիտացված ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով:

Համալիրի կառուցման աշխատանքները ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է շուրջ 9150մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 4300մ³ հետլիցք: Ավելցուկային 4850մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Հանված հողային զանգվածը մինչև օգտագործելը կամ տեղափոխելը պահվելու է շինհրապարակում առանձնացված վայրում նորմերին համապատասխան:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է (0.7 տ/տարի) և շինարարական աղբը (ներառյալ քանդման աշխատանքներից՝ 380մ³): Շինարարական աղբը տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ տարածքում բացառելով կենցաղային աղբի այրումը:

Շինարարության ժամանակ ջուրն օգտագործվելու է տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ջրի ծախսը ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (46 մարդ) հաշվարկվել է 861.9 մ³/շին.ժամ. կամ 1.105 մ³/օր, 15.000 մ² ջրցանի համար՝ 8437.5 մ³/շին.ժամ. կամ 0.75 մ³/օր, ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2259 մ³/շին.ժամ: Տեղումներից առաջացող և տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղորդվելու են պարզարան: Պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ջրատար մեքենայով, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում տեղադրվելու են ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումն և բարեկարգումն իրականացվելու է ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի՝ տարածաշրջանին և կլիմայական պայմաններին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Նախքան ծառատունկը իրականացվելու են ագրոմելիորատիվ միջոցառումներ, անցկացվելու է կազմակերպված ոռոգման համակարգ՝ կաթիլային ոռոգման հանգույցներով և ռետինե խողովակներով: Ոռոգման ջուրը կմատակարարվի Թումո կենտրոնի ոռոգման ցանցից, չբավարարման դեպքում ընկերությունը կդիմի «ԵՐԵՎԱՆ» ջրօգտագործողների միություն ջրօգտագործման ծավալները ավելացնելու նպատակով: Համաձայն Հայտի տեղեկատվության՝ հողի բերրի շերտը բացակայում է: Կանաչապատման համար պահանջվող բուսահողի (հողախառնուրդ 1647մ^3) ձեռքբերումը, տեղափոխումը, պահեստավորումը, հետագա օգտագործումն իրականացվելու է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ համաձայնեցված տեղական ինքանկառավարման մարմինների հետ:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մշտադիտարկման պլանում.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ (երեք ամիսը մեկ հաճախականությամբ),
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ (երեք ամիսը մեկ),
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին (օրեկան 2-3 անգամ), փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է հաշվարկային՝ չառաջացնելով մակերևութային հոսքեր դեպի Հրազդան գետ և հարևանությամբ գտնվող ջրատար առու,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանումը իրականացվելու է մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ (երեք ամիսը մեկ),
- թափոնների հավաքման վայրերի և հեռացման ուղիների հստակեցում շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր տեսակների համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար, վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութերով մաքրում,
- մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,

- ձայնային ազդանշանների, հակահրդեհային պաստառների, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումների տեղադրում՝ վթարները կանխարգելելու համար,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- նորատունկ ծառերի և խոտածածկի խնամք և մշտադիտարկում և այլն:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսվում է մասնահանել տարեկան 350 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն Հայտի՝ Համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Գործունեության տարածքով անցնող վերգետնյա գազատարի տեղափոխման աշխատանքներն իրականացվելու են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրվող տեխնիկական պայմանի համաձայն համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմատիվների պահպանմամբ: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է մասնակի կառուցապատված տարածքում, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Աջափնյակ վարչական շրջանը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում մասնակիցները դրական են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել Հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմամբ:
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն ներկայացված և հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:
- Շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը և ճանապարհների բեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինհրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Ապահովել Հայտում նախատեսված՝ գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ կառուցվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

- Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը լիազոր մարմնի կողմից ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները նախատեսվող գործունեության տարածքում առկա գազատարի տեղափոխման համար:

- Անհրաժեշտ է պահպանել քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N263-Ն և 31.03.2014թ. N93–Ն հրամաններով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2014 և բնակելի շենքեր Մաս 1. «Բազմաբնակարան բնակելի շենքեր»՝ ՀՀՇՆ 31-01-2014 նորմերի՝ մասնավորապես 44-րդ աղյուսակով և 448-րդ, 449-րդ, 450-րդ կետերով սահմանված պահանջները:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սիմոնյան կրթական հիմնադրամ» ՀՄԴ-ի կողմից ներկայացված՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան փողոց թիվ 16/2 հասցեում նախատեսվող Համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության Հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան